

## ԳՐԱԲԱՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱԹՅԷ ԲԱՐՆՐԻ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՆԹԱՅՐԸ

### Գ. Ս. ԶԱՔՅԱՆ

Լեզվի պատմական զարգացման ընթացքում բառը կարող է մի խոսքի մասից անցնել մյուսին՝ ձեռք բերելով տվյալ խոսքի մասին հատուկ իմաստային, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններ: Այս իրողությունը պայմանավորված է բառ-իմաստի կրած փոփոխություններով, որոնք ազդում են բառի խոսքիմասային նշանակության վրա՝ առաջ բերելով ձևաբանական տարարժեքություն, ինչի հետևանքով միևնույն բառույթը համատեղում է երկակի, եռակի (հազվադեպ՝ քառակի) գործառություն: Այս առումով կարող են աղերսվել բառերի ինչպես նյութական (գոյ./ած., ած./մկ., գոյ./մկ. և այլն), այնպես էլ նյութական և սպասարկու արժեքները (մկ./շղկ., գոյ./կապ և այլն):

Խոսքիմասային տարարժեքությունը՝ որպես լեզվական իրողություն, ուսումնասիրվել է թե՛ օտարազգի, թե՛ հայ լեզվաբանների կողմից: Սկսած լատինատիպ ու ինքնատիպ քերականությունների ձևավորման և զարգացման շրջանի քերականներից մինչև աշխարհաբարի և մեր օրերի շատ հայ լեզվաբաններ այս կամ այն չափով անդրադարձել են տարարժեք բառերի քննությանը՝ կատարելով գիտական արժեքավոր եզրահանգումներ՝ կապված խոսքիմասային փոխանցումների տիպերի առանձնացման, տարարժեք բառերի տարբերակման, դրանց ծագման օրինակափոխությունների րացահայտման և այլ կարևոր հարցերի հետ:

Լատինատիպ քերականությունների շրջանի աշխատություններում մեզ հետաքրքրող խնդիրը հիմնականում լուսարանվել է նյութական րովանդակությունից գուրկ խոսքի մասերի շրջանակներում: Բացահայտվել են խոսքիմասային երկարժեք, մասամբ՝ եռարժեք համատեղումներն ու տարբերակվել դրանք ըստ գործառության, քննարկվել են մակ միևնույն խոսքի մասի բազմիմաստ կարգային նշանակություններն ու գործառությունները՝

Ինքնատիպ շրջանի քերականական աշխատություններում խնդրո առարկա հարցը հայեցողական նկարագրությունից փոխադրվում է գիտական վերլուծության հարթություն: «Միջակը» եզրույթով տարբերակվում է լեզվի քառային կազմի այն շերտը, որի միավորները համատեղում են մեկից ավելի խոսքիմասային արժեքներ: Ընդ որում, ուշադրության կենտրոնում են եղել թե՛ լիմատո, թե՛ սպասարկու խոսքի մասերի քառարժեքականական աղերսները, ինչպես մակ՝ շարահյուսական համապատասխան կառույցը՝ ազատ կապակցությունների շրջանակը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Կոնստանտին Գալանտ, *Ջերականական և տրանսբանական թերածրթին առ յիմաստափոխությունն շահելոյ*, Հռոմ, 1645, էջ 105, *Ուսկան երկուսեցի*, *Ջերականութեան զիրք*, Ամստերդամ, 1666, էջ 31-36, *Հովի. Կոստանդնուպոլսեցի*, Չուրիին հայկարանութեան կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674, էջ 153-154, *Սյմեոն Տաղաչեցի*, Գիրք, որ կոչի քերականութիւն, Կոստանդնուպոլիս, 1725, էջ 115, *Հովի. Տաղաչեցի*, Հաճառոտ քերականութիւն և տրանսբանութիւն, Ամստերդամ, 1711, էջ 27-31, *Միքայիլ Մերաստեցի*, *Ջերականութիւն զբարբառի լեզուի Հայկազեան օտոյ*, Վենետիկ, 1730, էջ 190-191, 360, 363, 366, *Պաղատաոս Դոմիք*, *Պարզաբանութիւն քերականութեան կարգաոս և դիսքիմագ*, Պոլիս, 1736, էջ 144, 164, 180-181:

<sup>2</sup> Տե՛ս Մ. Դավիթեան, *Ջերականութիւն հայկազեան լեզուի*, Ետրի, 1859, էջ 274 - 276, 287-289, 290-344, Պ. Վեներեան, *Ջերականութիւն հայկական*, Վենետիկ, 1815, էջ 129, 204, 535, Ս. Թաղատաոսեցի, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 37-38, 58, 208-211, 238, 517, Վրթ. Դավիթեան, *Ջերականութիւն հայկազեան լեզուի*, *Խաւորած փոփոխութեանք և բառաւորաւոր աշխատաւորեալ ի և Ա. Այսոբեան, Վենետիկ*, 1885, էջ 28, 31-36, 167, 181-182, 309, 415-417, 435-436:

Աշխարհաբարի քերականական աշխատություններում լեզվաքերականական հարցադրումները յուրովի են մեկնաբանվում, որը պայմանավորված է մի կողմից՝ լեզվաբանական գիտության զարգացման նոր շրջանով, մյուս կողմից՝ անցյալի գիտական մվաճումները քննադատաբար յուրացնելու հանգամանքով: Այս շրջանի քերականները մեզ հետաքրքրող հարցերի շրջանակներում կատարել են առաջընթաց քայլ: Բառույթի խոսքինասային նոր արժեքը և քերականական նոր կարգը հաճախ պայմանավորել են կառույցի մեջ նրա գրաված դիրքով, նոր քերականական արժեքի ձևավորման գործոն են դիտել փոխաբերությունը, խոսքինասային նշանակությունները տարբերակել են՝ ելնելով լրացյալի բառաքերականական հատկանիշներից և այլն<sup>1</sup>:

Անցյալի դարասկզբի և խորհրդային շրջանի քերականագիտական աշխատություններում իմաստաբանական և բառաքննական հետազոտությունները նոր ծավալ են ստանում: Այս շրջանում ձևաբանական մակարդակի կառուցվածքային միավորները հաճախ բնութագրվում են իրարամերժ սահմանումներով: Մ. Աբեղյանը իմաստափոխության հետազոտության քննադատում նոր խոսք է ասում, սակայն այլ է բառերն ըստ խոսքի մասերի դասակարգելու նրա տեսակետը, ըստ որի խոսքի մասերը չունեն կայուն ձևաբանական արժեքներ<sup>2</sup>:

Մեծանուն հայագետ Հր. Աճառյանը իրենց իմաստային կառուցվածքում մեկից ավելի ձևաբանական արժեքներ համատեղող բառերը քննում է ինչպես հայերենի որոշակի գոյավիճակի ներսում, այնպես էլ նրա ընդհանուր պատմության համայնապատկերի վրա<sup>3</sup>: Խոսելով հայերենում միևնույն բառույթի՝ գոյ./ած. ձևաբանական համատեղումների մասին՝ նա պնդում է, որ այդ իրողությունը հատուկ է հնդեվրոպական հիմք լեզվին, որտեղ այդ խոսքի մասերը արտաքուստ տարբերակիչ (երկրորդական) ձևային չունեն: Հր. Աճառյանը հիմք լեզվում գոյ./ած. ձևաբանական բազմիմաստության տարբերակիչ գործոն է համարում նախ անվան սեռի կարգը, ապա մասնիկավորումը<sup>4</sup>:

Գ. Սևակը այդ իրողությունը կապում է խոսքինասային փոխանցումների հետ<sup>5</sup>:

Ա. Աբրահամյանը, հայերենի դերբայների առնչությամբ քննելով խոսքինասային փոխանցման երևույթը, բառույթի ձևաբանական բազմիմաստության իրողությունը կապում է բառիմաստի նեղացման գործոնի հետ<sup>6</sup>:

Էդ. Աղայանը, քննելով խոսքի մասերի միջև չեզոքացման հարցը, տարբեր խոսքի մասերի համար տարբեր ձևեր չունեցող բառերն անվանում է համանուններ, որոնք կատարում են տարբեր շարահյուսական դերեր<sup>7</sup>:

Գ. Գարեգինյանը շաղկապներին նվիրված մեծագրական ուսումնասիրության մեջ վեր է հանում շաղկապների և հարաբերակից խոսքի մասերի շարահյուսական կիրառական ու ձևաբանական արժեքների աղերսները՝ տարբեր քերականական արժեքներով հանդես եկող բառերը համարելով նյութական բովանդակության վերացարկման և քերականական հարաբերությունների ընդլայնման գործընթացի հետևանք<sup>8</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Մտ. Պալասանյան, Ընդհանուր տեսություն արևելեան նոր գրատր լեզուի Հայոց, Թիֆլիս, 1870, էջ 50-52, 110-111, 118, Ա Սյողմեան, Քերականություն արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1883, Ռույնի Ջննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1886, էջ 182-184, 218, 237-238, 244 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:

<sup>3</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., 1941, հ. 2, Եր., 1951, Ռույնի Հայերեն արմատական բառարան, Եր., 1971-1979:

<sup>4</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 1, Եր., 1952, էջ 24-25:

<sup>5</sup> Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 251:

<sup>6</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայներն ու նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 314-321, 353-358, 390-392, 395-397:

<sup>7</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Եր., 1967, էջ 143:

<sup>8</sup> Տե՛ս Գ. Գարեգինյան, Շաղկապների ժամանակակից հայերենում, Եր., 1963:

Մ. Ասատրյանը խնդրո առարկա բառերը քննելիս խոսում է խոսքի մասերի փոխանցման՝ մասնավորապես ած./գոյ., գոյ./մկ., ած./մկ., դերբայների՝ ած. և գոյ., գոյա-կանների՝ կապերի փոխանցման մասին և այլն<sup>11</sup>:

Ս. Աբրահամյանը, քննելով չթեքվող խոսքի մասերի համակարգը, խոսքիմասային փոխանցումների իրողությունները մեկնաբանելիս նկատում է մեկ ընդհանուր օրինաչափություն. այդ խոսքի մասերի հարստացման ուղին այլ խոսքի մասերից կատարված փոխանցումներն է, որոնց միջանկյալ օղակում այդ բառերը կարող են հանդես բերել հին և նոր ձևաբանական արժեքների համատեղումներ<sup>12</sup>:

Հմ. Օհանյանը ըստ անհրաժեշտության քննում է ածականի և այլ խոսքի մասերի հարաբերակցությունները ած./գոյ., ած./դեր., ած./մկ. ձևաբանական համատեղումներով: Նա նույնպես ընդունում է, որ բառույթի իմաստաարժեքային երկատվածությունը տեղի է ունենում շարահյուսական կիրառության հիմքի վրա<sup>13</sup>:

Ա. Քյուրքչյանը մակբայներին նվիրված թեկնածուականատեղության մեջ հայերենի զարգացման տարբեր գոյակիճակների մեջ ընձեռած լեզվական փաստերի վրա ըստ ամենայնի անդրադառնում է մակբայի և այլ խոսքի մասերի ձևաբանական աղերսներին<sup>14</sup>:

Խոսքիմասային տարարժեք բառերը յուրովի քննություն և մեկնաբանություն են ստանում Գ. Ջահուկյանի աշխատություններում: Նա հայերենի տեսության հարցերին նվիրված աշխատության մեջ քննում է գոյականական բառակապակցության գործառական կադապարի անդամների փոխանցման և փոխակերպման իրողությունները: Գ. Ջահուկյանը խնդրո առարկա բառերը քննելիս առաջին հերթին դասակարգում է դրանք՝ տարբերակելով եռակի և երկակի գործածություն ունեցող, ինչպես՝ գոյ./ ած./մկ., գոյ./ ած., ած./ մկ.: Նա ցույց է տալիս որոշ բառերի նյութական և սպասարկու արժեքների աղերսները՝ մկ./ շղկ., գոյ./ կապ և այլն:

Գ. Ջահուկյանը այդ կարգի բառերը միաժամանակ համարում է գործառական համանուններ, իսկ քերականական այդ երևույթը՝ գործառական համանունություն: Անվանի հայագետը հայոց լեզվի պատմությանը նվիրված աշխատության մեջ քննարկում է հնդեվրոպական նախալեզվի բառիմաստային խմբերի հետ հայերենի բառիմաստների ունեցած փոխհարաբերությունները, կատարված իմաստային անցումները<sup>15</sup>: Լեզվական այս հնագույն փաստերից նա բխեցնում է, որ բառերի իմաստաարժեքային կառուցվածքի երկատվածությունը միշտ չէ պայմանավորված խոսքիմասային փոխանցումների գործընթացով, հաճախ այն կարող է արձանագրվել իբրև ծագումնաբանական իրողություն<sup>16</sup>:

Վ. Ավագյանը արդի հայերենի լեզվական փաստերի հիման վրա քննում է եղանակավորող բառերի առաջացման և այլ խոսքի մասերի հետ դրանց հարաբերակցության հարցերը<sup>17</sup>:

Ն. Պատմասյանը բառերի կամ բառաձևերի ձևաբանական բազմիմաստությունը կապում է խոսքիմասային փոխանցումների հետ և դրանից բխեցնում, որ այդ կարգի բառախմբերը բառային մակարդակում ցուցաբերում են բազմիմաստություն, իսկ քերականականում դիտվում են համանուններ<sup>18</sup>:

<sup>11</sup> Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանական հարցեր, հ. 1, Եր. 1970, էջ 92-97:

<sup>12</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 117-159:

<sup>13</sup> Հմ. Օհանյան, Ածական անունը ժամանակակից հայերենում, Եր, 1962:

<sup>14</sup> Տե՛ս Ա. Քյուրքչյան, Մակբայի հարաբերակցությունն այլ խոսքի մասերի հետ (ՀՄԻ, «Գիտ. աշխատություններ», հ/լ բաժին, 1961, № 1):

<sup>15</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987:

<sup>16</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 526-527:

<sup>17</sup> Տե՛ս Վ. Ավագյան, Եղանակավորող բառերը և նրանց ուսուցումը, Եր., 1975:

<sup>18</sup> Տե՛ս Ն. Պատմասյան, Զերականական համանունները ժամանակակից հայերենում, Եր., 1979:

Հովհ. Բարսեղյանը, ի մի բերելով խոսքի մասերի վերաբերյալ հայ լեզվաբանական մտքի նվաճումները, անդրադարձնում է նաև խոսքի մասային փոխանցման երևույթին՝ այն համարելով բառերի՝ այլ խոսքի մասերի գործածությամբ հանդես գալու երկարատև գործընթացի հետևանք: Նա ուշադրություն է դարձնում նաև բառաձևերի խոսքի մասային բազմիմաստությանը՝ տարբերակելով բառաձևի երկրորդական նշանակությունը համաձայն նոր խոսքի մասային նշանակությունից<sup>19</sup>:

Հայերենի խոսքի մասային տարարժեք բառերի քննությանն անդրադարձել է նաև Ա. Հայրապետյանը՝ կապված ածանցավոր ածականների մասնակի փոխանցումների հետ<sup>20</sup>:

Անդրադառնալով քերականական բազմարժեքություն ունեցող բառերին՝ նպատակ ենք հետապնդում ցույց տալու գրաբարում խոսքի մասային տարարժեքություն ունեցող բառերի անցած ուղին հայերենի պատմական զարգացման հետագա ընթացքում: Ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ վերոհիշյալ բառերը խոսքի մասային բազմիմաստությունից անցել են մեմիմաստության (մասնակի բացառություններով)՝ արդի հայերենի բառապաշար մուտք գործելով ձևաբանական մեկ արժեքով:

Գրաբարյան, միջինհայերենյան, արդիհայերենյան բառարանների<sup>21</sup>, ինչպես նաև գրականությունից քաղված համապատասխան փաստական նյութի հիման վրա քննել ենք բառի մասունքների փոփոխությունները գրական հայերենի պատմական զարգացման մեջ:

Ուսումնասիրելով գրաբարում խոսքի մասային տարարժեքություն (հետայսու՝ ԽՏ) ունեցող մոտ 500 բառ՝ համոզվում ենք, որ քերականական տարարժեքությունը գերազանցապես կապվում է գոյ./ած. խոսքի մասային իմաստների համատեղման հետ: ԽՏ ունեցող 500 բառից մոտ 400-ը գրաբարում ունի գոյ./ած. խոսքի մասային իմաստների համատեղում, որոնցից մոտ 320-ը այսօր ԽՏ չի պահպանել (150-ը արդի հայերենի բառապաշար է մուտք գործել գոյականի, իսկ 170-ը ածականի ձևաբանական արժեքով): Քերականական տարարժեքության մյուս դեպքերի թիվն անհամեմատ փոքր է:

Ինչո՞վ է պայմանավորված այս իրողությունը, որո՞նք են այն դրոշմատվածները, որոնք հանգեցրել են քերականական բազմիմաստությունից մեմիմաստության անցմանը հայերենի քերականական համակարգի պատմական զարգացման ընթացքում:

Ինչպես գիտենք, խոսքի մասային փոխանցումները պայմանավորում են բառերի իմաստաարժեքային կառուցվածքի երկատվածությունը, բայց բազմաթիվ դեպքերում կարող են արձանագրվել իբրև ծագումնաբանական իրողություն: Սա, անշուշտ, կապված է հնդեվրոպական հիմք լեզվի հետ, քանզի գոյ./ած. ԽՏ արմատները հենց հնդեվրոպական նախալեզվում են:

Ինչպես նշում է Աճառյանը, «Հնդեվրոպական լեզուներում ածականը ոչ մի մասնիկով կամ ձևով չէր զանազանվում գոյականից, ամեն գոյական կարող էր գործածվել նաև իբրև ածական և ամեն ածական կարող էր գործածվել նաև իբրև գոյական»<sup>22</sup>: Այսպիսով, հայերենը հնդեվրոպական նախալեզվից ժառանգում է ԽՏ ունեցող հարյուրավոր բառեր (մեր ուսումնասիրած բառերը, իհարկե, գերազանցապես պարզ են, այսինքն՝ արմատական), որոնց հիմնական մասը գրական հայերենի պատմական զարգացման ընթացքում կորցրել է ԽՏ-ը: Ինչպես վկայում են պատմական քերականության ընձեռած փաստերը, հնդեվրոպական ցեղակից լեզուներում ավելի ուշ առաջանում են գոյականը ածականից

<sup>19</sup> Տե՛ս Հովհ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980, էջ 474:

<sup>20</sup> Տե՛ս Ա. Հայրապետյան, Ածանցավոր ածականների խոսքի մասային փոխանցումները ժամանակակից հայերենում, Եր., 1991:

<sup>21</sup> Տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Եր., 1981, Ռ. Ղազարյան, Գրաբարի քառարան, Եր., 2000, Ստ. Մախասյանց, Հայերենի բացատրական քառարան, հ. 1-4, Եր., 1944-45, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի քառարան, հ. 1, Եր., 1987, հ. 2, Եր., 1992, Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական քառարան, հ. 1-2, Եր., 1976, Հ. Աճառյան, Հայերենի արմատական քառարան, հ. 1-4, Եր., 1971-79:

<sup>22</sup> Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1, Եր., 1952, էջ 24:

տարբերելու զանազան միջոցներ, երբ «ինչ-որ մասնիկ դառնում է գոյականի հատկանիշ, իսկ այդ մասնիկը վերացնելով՝ ստացվում է ածական»<sup>21</sup>:

Հնդեվրոպական լեզուների քերականական արտահայտության հիմնական միջոցը հատկապես վերջնամասնիկավորումն էր (վերջածանցներ, վերջավորություններ): Գրաբարը ևս հարուստ էր կենսունակ ածանցներով, որոնք բառապաշարի հարստացման համար բառակազմական լայն հնարավորություններ էին ստեղծում: Բնականաբար, այս հանգամանքը խթանում է քերականական տարբեր արժեքներով ծանրաբեռված բառերի իմաստային դաշտի բեռնաթափումը:

ԽՏ-ից քերականական մենարժեքության անցումը պայմանավորում ենք երկու հանգամանքով՝ *մասնիկավորմամբ և իմաստափոխությամբ*:

Բառը կորցնում է ԽՏ-ն, երբ քերականական երկրորդ նշանակությունը արտահայտվում է նոր բառույթի միջոցով՝ ածանցի կամ վերջավորության օգնությամբ, կամ երբ բառը պատմական զարգացման ընթացքում կորցնում է բառային այն նշանակությունը, որը պայմանավորում էր երկրորդ քերականական արժեքը՝ բառը դարձնելով տարարժեք: Երկու դեպքում էլ արդյունքը նույնն է. հայերենի հին կամ միջին շրջաններում ԽՏ ունեցող բառն արդի հայերենի բառապաշար է մուտք գործում քերականական մեկ արժեքով:

Համապատասխան փաստական նյութի ուսումնասիրությունը հիմք է տալիս ասելու, որ գրաբարի բառապաշարում գոյ.///ած. ԽՏ ունեցող բառերի կողքին գործում են մի դեպքում ածականակերտ, մյուս դեպքում գոյականակերտ ածանցներով կազմված նույնարմատ, քերականորեն մենարժեք բառեր:

*Փայլ* բառը գրաբարում ունի թե՛ «փայլուն» (ած.), թե՛ «փայլումն» (գոյ.) իմաստները: Իբրև *զփայլ* մաքուր փայլական (Նար. երգ), *Փայլիք* լատերոք եկեալ էին և ջահիւք (Ոսկ. մտք.): Այս տարարժեք բառի կողքին գրաբարն ունի *փայլուն* ածականը. *Փայլուն* ճանճանչիւք ճառագայթեալ ՚ի մեզ (Գիտն.): Կամ՝ *խոնա* բառը գրաբարում ունի «թացութիւն» (գոյ.) և «թաց», «տամուկ» (ած.) նշանակությունները. Չմարմին կազմեաց ՚ի ցամաքէ և ՚ի խոնաւոյ (ՅՃԽ), Չորին և խոնաւ կերակրոյ (Նիւս. քն.): Քերականորեն տարարժեք բառի կողքին առանձին գործածություն ունի *խոնաութիւն* գոյականը. Ընդ ծագել արեզական օդոյն զխոնաութիւն ջուրց առեալ (Եզն.):

Բերենք այլ օրինակներ՝ ցույց տալու համար գոյ.///ած. ԽՏ ունեցող բառերի անցումը դեպի գոյական, ինչին, ինչպես նշեցինք, նպաստել է ածականակերտ ածանցների լայն գործածությունը: *Անջրպետ* բառը գրաբարում ունի «պատվար», «միջոց» (գոյ.) և «գատող», «բաժանող» (ած.) նշանակությունները: Ընդ *անջրպետս* վիմաց ծովու (Վեցօր., է): Ընդարձակ միջոցաւ յաւէտ *անջրպետ* նշոյլիքն ծածկի ի նոցունց (Նար. խչ. և կուս.): Միջնադարյան գրականության էջերում հանդիպում ենք *անջրպետական* ածականին. Բաց... գրագմատարած պատուարս *անջրպետական* առագաստացն արձանացեալ ընդդէմ իմ (ՄՀԲ, էջ 65):

*Ճարտասան* բառն ունի թե՛ «ճարտար խոսող» (գոյ.), թե՛ «ճարտասանական» (ած.) իմաստները. Իմաստասէրն և ճարտասանն... (Պիտ.), Ոչ եթէ մարդկեղէն ինչ ճարտասան խօսիւք (Պետր. սիւն): Առանձին գործածություն ունի *ճարտասանական* ածականը. Յիմաստս ճարտասանականս արհեստիս (Պիտ.): Նույնը պետք է ասել «տրտունջ», «վճիռ», «տիւք», «եռանդ», «ձանձրոյթ», «հյութ», «մագաղաթ», «հուր» և բազում այլ բառերի մասին, որոնք երկարժեք են քերականորեն և գործածվել են «տրտնջական», «վճռական», «տյութական», «եռանդուն», «ձանձրալի», «հյութեղ», «մագաղաթյա», «հրեղեն» ածականների կողքին: Քերականորեն երկարժեք բառերի քերականական արժեքներից մեկի իմաստն արտահայտող առանձին բառի գործածության հետևանքով տարարժեքությունը վերանում է: ԽՏ ունեցող շատ բառերի բովանդակային պլանում ածականական իմաստի համատեղումը գոյականի հետ ժամանակի ընթացքում մթազնում և մտաացության է մատնվում:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 25:

**Գոյ./ած.** ԽՏ ունեցող շատ բառեր կորցրել են ածականական նշանակությունը, երբ վերջինս արտահայտվել է նոր բառությամբ, արդեն ոչ թե ածանցով, այլ ածականի ձևաբանական նշանակությունն ունեցող -ած վերջավորությամբ դերբայով: Օրինակ՝ *ծրագիր* բառը գրաբարում ունի «ծրագիր» (գոյ.) և «ծրագրում» (ած.) նշանակությունները: Չի այն *ծրագիր* միայն է ճշմարտութեան. (Ռսկ. ճառք), Չհայրենական մատենան... և *գծրագիր* կարգեալս (Ագաթ.): Այսօր *ծրագիր* բառը քերականորեն մենարծեք է, ինչպես առանձին գործածություն ունեցող «ծրագրվածը»: *Քաղց* բառը գրաբարում ունի թե՛ «սով», թե՛ «քաղցած» իմաստները. *Չծուծկալութիւն* ՚ի *քաղցոյ* (Վրք. հց.). *Չքաղցսն* կերակրէր, զմերկսն զգեցուցանէր (Սկևռ.): Այսօր «քաղց» և «քաղցած» բառերը քերականորեն մենիմաստ առանձին բառեր են: Նույնը պետք է սսել «շաղպա», «խոց», «ժանգույց», «նկարագիր», «ծավալ», «չվոթ» և բազում այլ բառերի մասին:

**Գոյ./ած.** ԽՏ ունեցող շատ բառեր մենիմաստության անցնելիս համարել են ածականների շարքը, քանի որ քերականական տարածություն ունեցող բառերի կողքին, ինչպես վերևում նշել ենք, առանձին գործածություն ունեին գոյականկերտ ածանցներով կազմված բառերը: Ինչպես օրինակ, *խոհական* բառը գրաբարում համատեղում է թե՛ գոյականական «խոհականութիւն», թե՛ ածականական «խորհող», «կշռադատող» իմաստները: Առանձին հանդիպում է *խոհականութիւն* գոյականը: Չորից առաքինութեանց մի տեսակ է *խոհականութիւն* (Փիլ. այլաբ.): *Ժամադիր* բառը գրաբարում ունի թե՛ «ժամադրում», թե՛ «ժամադրութիւն» իմաստները: Անցեալ երկու ատուրք *ժամադիր* խաբէտիսան (Փարպ.): Որպէս պարոս հատո՛ գրո *ժամադիր* արտաստացն (Նար. խրատ): Ինչպես այլ դեպքերում, այստեղ էլ գոյականական նշանակությունը առանձին բառով ունի ինքնուրույն գործածություն: Իրրև եհաս *ժամադրութիւն*, և չտայ զգանձս փրկանացն (Խոր., բ. 23): Ըիշտ այդպես *սպասագեն* երկարժեք բառի կողքին կա «սպասագինութիւն», *անտեղի* բառի կողքին՝ «անտեղիութիւն», *ժսհահոտ* բառի կողքին՝ «ժսհահոտութիւն» բառը և այլն: Նույն ուղին է անցել *ձիգ* ԽՏ ունեցող բառը, որի կողքին կա «ձգումն» գոյականը, ինչպես *ճապար* բառի կողքին՝ «ճապարումն» գոյականը և այլն:

Այսպիսով, ժամանակի ընթացքում գրաբարի երկակի գործառնություն ունեցող բազմաթիվ բառեր անցնում են քերականական մենիմաստության՝ խոսքիմասային տարածությունը պայմանավորող իմաստներից մեկի՝ առանձին բառությամբ արտահայտվելու շնորհիվ, համապատասխան ածանցների կամ վերջավորությունների միջոցով:

Երկրորդ հանգամանքը, որ բերում է քերականական մենիմաստության, ինչպես նշել ենք, ԽՏ ունեցող բառի երկրորդ (գոյ. կամ ած.) ձևաբանական արժեքը պայմանավորող նշանակության կորուստն է:

Օրինակ՝ *թաքուստ* բառը գրաբարում ունի թե՛ գոյականական, թե՛ ածականական նշանակություններ՝ «թաքստոց» և «թաքուն», «ծածուկ»: Տեղի փախստի և *թաքստի* (Եղ.): *Թաքուստ* ունին գորոգայթն, ուր առաջնորդեն մեզ... (Լմբ. պտրգ.): Այսօր *թաքուստ* բառը միայն գոյական է: *Շամանդաղ* բառը ունի «մեզ», «մշուշ» (գոյ.) և «նսնմացած», «մթագնած» (ած.) իմաստները: *Շամանդաղքն* մթինք գեբակն լուսոյ խնուն (ՆՇԹԸ), Յստակեմք զակն հոգւոյն *շամանդաղ* յախտից (Տօմակ.):

Թե՛ միջին, թե՛ արդի հայերենի բառապաշարում *շամանդաղ* բառն այլևս չունի ածականական նշանակություն, ուրեմն և՛ քերականական արժեքը: *Առապար* բառը այսօր չի պահպանել իր ածականական «ղժվար» նշանակությունը, ինչպես *փոր* բառը՝ «սմամեջ», *նշավակ* բառը՝ «նշանավոր, անվանի», *համբոյր* բառը՝ «հաշտ, սիրով», *խիղճ* բառը՝ «արատավոր», «չար», *հուն* բառը՝ «սակավաջուր» և այլն:

Ըիշտ այդպես էլ գոյ./ած. ԽՏ ունեցող բառերի մի խումբ կորցրել է գոյականի քերականական արժեքը պայմանավորող նշանակությունը և որպես մենարծեք բառ՝ տեղ է գտել արդի հայերենի ածականների շարքում: Օրինակ՝ *խմորում* բառն այսօր չունի գոյականական «հաց», «խմոր» իմաստները, որոնք ուներ գրաբարում: Մի՛ ուտիցեք ընդ նմա *խմորում* (Օր. ժղ. 3), *հին* բառը կորցրել է «նախնի» նշանակությունը. *Չհինն* մի՛ ածեք զմտաւ (Եւս. քր.), *ձեռաստեղծ* բառը՝ «կուռքի արձան» նշանակությունը. Մի՛ առնիցեք ձեզ

**ձեռաստեղծ** (Ոսկ. յի.): *Կիրք* բառը արդի հայերենում չունի «մարզանք» նշանակությունը. Որպես որք անցին ընդ **կիրթս**, ուսուցին մեզ (Լմբ. պտորգ.), *մռայլ* բառը՝ «մշուշ», «մատախառ» նշանակությունը. Իբր դոյզմ *մռայլ*՝ ի տապ արևու (Նար. երգ), *մեմ* բառը՝ «աղջամուղջ», «խավար» նշանակությունը, *մանրամասն* բառը՝ «մաս-մաս» նշանակությունը և այլն:

Գոյ./ամ. ԽՏ ունեցող շատ բառեր իրենց բառային բովանդակության մեջ համատեղել են երկու հասկացություն՝ թե՛ առարկայի, թե՛ նույն առարկայի որևէ հատկանշի: ԽՏ-ը կորցնելիս այս բառերի մի մասը պահպանում է միայն առարկա, մյուս մասը՝ առարկայի հատկանիշ ցույց տալու հատկությունը, ինչպես օրինակ *ամուշահոտ* բառը մինչև արդի հայերենի բառապաշար մուտք գործելը ուներ թե՛ ածականական՝ մեզ քաջ հայտնի նշանակությունը, թե՛ գոյականական՝ «անուշահոտ բան» իմաստը: Եւ *անուշահոտեր* տուր որ հոտայ (ԱՄՕԲ, 423): Խոսքիմասային մենիմաստության անցնելով՝ բառը կորցնում է երկրորդ նշանակությունը, ինչպես *անեղ* բառը՝ «չեղած բան» նշանակությունը (ՆՀԲ, 1026, ԳԲ 616), *այրելի* բառը՝ «վառելիք» նշանակությունը (ՆՀԲ 98, ԳԲ 61), *անջրդի* բառը՝ «անջրդի վայր» (ՆՀԲ 232, ԳԲ 139), *աստի* (ասվյա) բառը՝ «բրդե շոր» նշանակությունը (ՆՀԲ 314, ԳԲ 186) և այլն: Իսկ զրաբարում ԽՏ ունեցող այն բառերը, որոնք այսօր չունեն ածականական իմաստ, կորցրել են առարկայի հատկանիշ ցույց տվող նշանակությունը՝ պահպանելով միայն գոյականական նշանակությունն ու գոյականի ձևաբանական արժեքը: *Արևելակողմն, աջակողմն, լեռնակողմն...* բառերն այսօր չունեն զրաբարյան «... կողմում գտնվող» իմաստները, ինչպես *հովանոց* բառը՝ «հովանոց ունեցող» նշանակությունը. *Զվարագոյրն հովանոց* (Թուոց), *մականուն* բառը՝ «մականուն ունեցող» (ՆՀԲ 192, ԳԲ 137), *պահակ* բառը՝ «պահպանող», *նախագահ* բառը՝ «առաջին գահն ունեցող», Երթալ ի *ճախագահն* քաղաք առ կայսրն (Խոր., գ. 14), *զեռուն* բառը՝ «զեռացող», «եռացող» իմաստները. Կերակուր անպաճայճ և *զեռուն* ջուր (Փիլ.) և այլն:

Այսպիսով, զրաբարում գոյ./ամ. ԽՏ ունեցող բազմաթիվ բառեր հայերենի պատմական զարգացման ընթացքում մասնիկավորման կամ քառիմաստի փոփոխության հետևանքով կորցրել են քերականական բազմիմաստությունը՝ արդի հայերենի բառապաշար մուտք գործելով որպես քերականորեն մենարժեք բառեր:

## ՀԱՍՏԱՌՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄՕԲ - Ամիրդովլաթ Ամասեացի, Օգոստ թժշկութեան, Եր., 1940:

Ազաթ. - Ազաթանզեղայ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1909:

Դիոն. - Սրբոյն Գիրք Դիոնիսոսի արիսպագացոյ յաթննայ, յաղագս երկնային քանանայապետութեանց (ըստ ՆՀԲ):

Եզնիկ - Եզնիկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:

Եղ. - Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1957:

Եւս. քր. - Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ Ժամանականք (Քրոնիկոն), Վենետիկ, 1818:

Թուոց - Գիրք Թուոց, Աստուծաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, Պոլիս, 1895:

Խոր. - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1981:

Լմբ. պտորգ. - Սրբոյն Ներսեսի Լամբրոնացոյ՝ մեկնութիւն խորհրդոյ պատարագի, Վենետիկ, 1847:

ՅճԽ - Հօրն մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք, Վաղարշապատ, 1894-6:

Նիւս. բն. - Նեմեսիոսի Եմեսացոյ (կամ Գրիգորի Նիւսացոյ), Յաղագս բնութեան մարդոյ, Վենետիկ, 1889-91:

Նար. խչ. և կուս. - Պատմութիւն և ճառ խաչի, գովեստ կուսի (ըստ ՆՀԲ):

Նար. խրատ. - Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մարտուր վարուց առաքինութեան, Վենետիկ, 1840:

Նար. երգ. - Նարեկացի, Մեկնութիւն երգոց երգոյն Մողոմոնի, Վենետիկ, 1840:

ՆՇԹԸ - Ն. Շնորհալոյ թուղք ընդհանրական, Երուսաղէմ, 1871:

Ոսկ. ճառք - Յոհաննու Ոսկեբերանի ճառք, Վենետիկ, 1861:

Ոսկ. յի. - Յ. Ոսկեբերանի Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու, Պոլիս, 1717:

Ոսկ. մտք. - Յ. Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս, հտ. Ա և Բ, Վենետիկ, 1826:

Սկևռ. - Գրիգոր Սկևռացի, Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի (տե՛ս Սոփերք հայկականք, ԺԵ, Վենետիկ, 1854):

Վեցոր. Է - Ս. Բարսեղի եպս. Կեսարու Կապաղովկացոց ճառք վասն Վեցօրէից կամ վեցօրեայ արարչութեան, Վենետիկ, 1830:

Վրք. հց. - Վարք Սրբոց հարանց, հտ. Ա և Բ, Վենետիկ, 1861:

Տօնակ. - Տօնական մատեան..... համարեալ մասամբ գործ Գրիգորի կամ Հովհաննու Գանձակեցոյ (ըստ ՆՂԲ):

Պիտ. - Գիրք Պիտոյից Մովսիսի Քերթողի, Վենետիկ, 1865 (Մովսէսի Խորհնացոյ մատեանագրութիւնք):

Պետր. սիւն. - Պետրոսի սիւնեաց եպիսկոպոս, հրատ. Գ. Տէր Սկրտչեան, Վաղարշապատ, 1902:

Փիլ. այլաբ. - Փիլոնի երրայեցոյ.... գիրք խնդրոյ և լուծմանց՝ առաւել այլաբանական տեսութեամբ (ըստ ՆՂԲ):

Փարս. - Ղազարու Փարսեցոյ Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1904:

Օր. - Երկրորդումն օրինաց, Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, Պոլիս, 1895:

**Г. С. ЗАКЯН - Историческое развитие многозначных слов в древнеармянском языке.** - В статье представлено изучение группы слов, которые в древнеармянском, а также в дальнейшей стадии исторического развития языка имели разные грамматические (существительные/прилагательные) значения.

Как показывают факты, большинство этих слов являются однозначными в современном армянском языке. Исходя из этого, можно утверждать, что данные слова постепенно из грамматически многозначных перешли в однозначные слова. Этот переход обусловлен частицами, когда второе грамматическое значение слова (в данном случае, значение существительного/прилагательного) выражалось отдельным словом с помощью соответствующего суффикса или окончания. Переходу также способствовало изменение значения слова, когда оно теряло свое второе грамматическое значение и становилось грамматически однозначным. Изменение значения слова может также обуславливаться развитием общества, когда слово в современном литературном армянском языке приобретает совершенно другое значение, которое, в отличие от древнеармянского, имеет только одно грамматическое значение, соответственно и синтаксическое применение.